# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԱՐԶ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8

ք. Երևան «02» 12 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Մառք>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 17 970 000 (**տասնյոթ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար**) ՀՀ դրամ, որից՝

- ***Երևան քաղաքի <<Ե. Չարենցի անվան տուն-թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգան նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,***

- ***ՀՀ Սյունիքի մարզի <<Ն. Ադոնցի անվան թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգան նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,***

- ***ՀՀ Արմավիրի մարզի ՀԱՊ ՊՈԱԿ-ի Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի մասնաճյուղի 2-րդ հարկը սփյուռքի թանգարանի վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,***

*- Երևան քաղաքի <<Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն>> ՊՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 210 000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Արարատի մարզի Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,*

*- <<Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիկի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Գեղարքունիքի մարզի գ.Ն.Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,*

*- ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,*

*- Հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մարզադահլիճների վերակառուցման նախագծանախահաշվայի փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 7 300 000 (յոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,*

*- Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների նոր մարզադահլիճների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն - 3 400 000 (երեք միլիոն չորս հարյուր հազար) ՀՀդրամ:*

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ), բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները, ինչը կարող է կիրառվել միայն Պատվիրատուի կողմից քաղաքաշինական պարզ փորձաքննության ներկայացված օբյեկտներից որևէ մեկի կամ մի քանիսի ամբողջական փորձաքննություն իրականացնելու և այդ եզրակացությունը պատվիրատուին ներկայացնելու դեպքում:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<Մառք>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ք. Երևան, Պ. Սևակի փող. 1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ՝ համաձայն հավելված N 4 | Հ/Հ 16062001019100 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 01236957 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| _______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն) | _______________ Գ. Հակոբյան<br>(ստորագրություն) |

Հավելված N 1
« 02 » 12 2020թ. կնքված
N ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության

| | |
|---|---|
| Չափաբաժին 1 | Երևան քաղաքի <<Ե. Չարենցի անվան տուն-թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 2 | ՀՀ Սյունիքի մարզի <<Ն. Ադոնցի անվան թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 3 | ՀՀ Արմավիրի մարզի ՀԱՊ ՊՈԱԿ-ի էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի մասնաճյուղի 2-րդ հարկը սփյուռքի թանգարանի վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 4 | Երևան քաղաքի <<Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն>> ՊՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 5 | ՀՀ Արարատի մարզի Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 6 | ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 7 | <<Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 8 | ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 9 | ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 10 | ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիկի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 11 | ՀՀ Գեղարքունիքի մարզի գ.Ն.Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 12 | ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 13 | Հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մարզադահլիճների վերակառուցման նախագծանախահաշվայի փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |
| Չափաբաժին 14 | Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների նոր մարզադահլիճների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն |

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | | 50531140/51 | դրամ | 600 000 | 1 | ք. Երևան | Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր օբյեկտի համար նախագծանախահաշվային փաստաթղթերն ընկերությանն ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող օրվանից 15 օրացուցային օր: |
| 2 | | 50531140/53 | | 600 000 | 1 | ՀՀ Սյունիքի մարզ | |
| 3 | | 50531140/52 | | 600 000 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ | |
| 4 | | 50531140/54 | | 210 000 | 1 | ք. Երևան | |
| 5 | | 50531140/16 | | 750 000 | 1 | ՀՀ Արարատի մարզ | |
| 6 | | 50531140/21 | | 420 000 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ | |
| 7 | | 50531140/14 | | 800 000 | 1 | ք. Երևան | |
| 8 | | 50531140/17 | | 840 000 | 1 | ՀՀ Արարատի մարզ | |
| 9 | | 50531140/15 | | 750 000 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ | |
| 10 | | 50531140/20 | | 500 000 | 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| 11 | | 50531140/18 | | 750 000 | 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| 12 | | 50531140/19 | | 450 000 | 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| 13 | 13-1 | 50531140/31 | | 350 000 | 1 | ք. Երևան | |
| | 13-2 | 50531140/32 | | 350 000 | | ք. Երևան | |
| | 13-3 | 50531140/33 | | 350 000 | | ք. Երևան | |
| | 13-4 | 50531140/34 | | 350 000 | | ք. Երևան | |
| | 13-5 | 50531140/35 | | 350 000 | | ք. Երևան | |
| | 13-6 | 50531140/36 | | 350 000 | | ք. Երևան | |
| | 13-7 | 50531140/37 | | 400 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 13-8 | 50531140/38 | | 400 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 13-9 | 50531140/39 | | 400 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 13-10 | 50531140/40 | | 400 000 | | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| | 13-11 | 50531140/41 | | 400 000 | | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| | 13-12 | 50531140/42 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-13 | 50531140/43 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-14 | 50531140/44 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-15 | 50531140/45 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-16 | 50531140/46 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-17 | 50531140/47 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-18 | 50531140/48 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-19 | 50531140/49 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 13-20 | 50531140/50 | | 400 000 | | ՀՀ Վայոց Ձորի մարզ | |
| 14 | 14-1 | 50531140/13 | | 300 000 | 1 | ք. Երևան | |
| | 14-2 | 50531140/22 | | 300 000 | | ք. Երևան | |
| | 14-3 | 50531140/23 | | 350 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 14-4 | 50531140/24 | | 350 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 14-5 | 50531140/25 | | 350 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 14-6 | 50531140/26 | | 350 000 | | ՀՀ Լոռու մարզ | |
| | 14-7 | 50531140/27 | | 350 000 | | ՀՀ Գեղարքունիքի մարզ | |
| | 14-8 | 50531140/28 | | 350 000 | | ՀՀ Արմավիրի մարզ | |
| | 14-9 | 50531140/29 | | 350 000 | | ՀՀ Արագածոտնի մարզ | |
| | 14-10 | 50531140/30 | | 350 000 | | ՀՀ Արագածոտնի մարզ | |

| Տեխնիկական բնութագիրը | |
|---|---|
| 1 | **Քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման բնութագիրը** |
| | ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման երկրորդ կետով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան՝ համաձայն Հավելված N 2-ի |
| 2 | **Կատարման ենթակա աշխատանքների անվանումը** |
| | Պատվիրատուի կողմից ներկայացվող նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում |

<table>
<tr><td>3</td><td colspan="2">Նախագծի փորձաքննության ենթակա փաստղթեր</td></tr>
<tr><td></td><td colspan="2">• Ճարտարապետական մաս<br>• Կոնստրուկտորական մաս՝ այդ թվում ծրագրային հաշվարկի մաս<br>• Ներքին և արտաքին էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն<br>• Օդափոխություն, օդորակում, գազամատակարարում և ջեռուցում<br>• Ներքին և արտաքին ջրամատակարարում, ջրահեռացում և հրդեհաշիջում<br>• Էլեկտրաէներգետիկական համակարգեր՝ ենթակայաններ և կաթսայատներ /առկայության պարագայում/<br>• Ներքին կապի, թույլ լարման ցանցերի ու հակահրդեհային ազդարարման համակարգեր<br>• Էներգախնայողության միջոցառումներ<br>• Այլըտնրանքային էներգիայի համակարգեր՝ արևային կայաններ<br>• Կենսաապահովման համակարգեր՝ թթվածին, օդ և վակումի կենտրոնացված համակարգեր /առկայության պարագայում/<br>• Նախահաշիվ<br>• Շինարարության կազմակերպման մաս</td></tr>
<tr><td>4</td><td colspan="2">Տեխնիկական առաջադրանք՝ համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի</td></tr>
<tr><td>5</td><td colspan="2">Օբյեկտի շինարարական աշխատանքների ընթացքում, հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, Պատվիրատուի կամ Հեղինակի ներկայացմամբ տվյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը ենթակա է պարզ փորձաքննության Ընկերության կողմից անհատույց, իսկ այդ փոփոխությունների ընդհանուր արժեքը չի կարող ավել լինել տվյալ օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքի 15%-ից: Սահմանված սահմանաչափը գերազանցող փոփոխությունների փաթեթի լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորման դեպքում, եթե կողմերը այլ գրավոր համաձայնության չեն գալիս:</td></tr>
<tr><td>6</td><td>Հիմնավորում</td><td>ՀՀ կառավարության 24.09.2020 N1589-Ն որոշում:</td></tr>
<tr><td>7</td><td colspan="2">Սույն հրավերով ներկայացված նախագծային փաստաթղթերի պարզ քաղաքաշինական փորձաքննության ծառայությունները պետք է իրականացվեն հետևյալ լիցենզիայի ներդիրների շրջանակներում</td></tr>
<tr><td></td><td colspan="2">ԼԻՑԵՆԶԻԱ<br>(<Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ<br>(<ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1533-Ն որոշում>)<br>(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)</td></tr>
<tr><td></td><td colspan="2">- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր.<br>- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.<br>- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր.<br>- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր.<br>- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր.<br>- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր.<br>- ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ճարտարապետական մաս.<br>- ճարտարապետաշինարարական փաստաթղթերի կոնստրուկտորական մաս.</td></tr>
</table>

** Ծառայության սկիզբը յուրաքանչյուր օբյեկտի համար համարվում է Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերն ընկերությանն ամբողջական լրակազմով տրամադրելու օրվան հաջորդող օրը:*

*Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական լրակազմով կտրամադրվեն ոչ ուշ քան 2020 թվականի դեկտեմբերի 5-ը:*

*Պատվիրատուի կողմից ընկերությանը միաժամանակ մեկից ավելի օբյեկտների փաթեթի տրամադրումը չի հանգեցնում ժամկետի փոփոխության:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ՝ համաձայն Հավելված N 4-ի
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Մառք>> ՍՊԸ
ք. Երևան, Պ. Սևակի փող. 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16062001019100
ՀՎՀՀ 01236957

Տնօրեն՝

_______________ Գ. Հակոբյան
(ստորագրություն)

*Հավելված N 2*
*« 02 » 12 2020թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50531140/51 | Երևան քաղաքի <<Ե. Չարենցի անվան տուն-թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 600 000 | 600 000 |
| 2 | 50531140/53 | ՀՀ Սյունիքի մարզի <<Ն. Ադոնցի անվան թանգարան>> ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 600 000 | 600 000 |
| 3 | 50531140/52 | ՀՀ Արմավիրի մարզի ՀԱՊ ՊՈԱԿ-ի Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի մասնաճյուղի 2-րդ հարկը սփյուռքի թանգարանի վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 600 000 | 600 000 |
| 4 | 50531140/54 | Երևան քաղաքի <<Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն>> ՊՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 210 000 | 210 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
